Ծառայությունների մատուցման

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Ն ՀԱԱՀ-ՄԱԾՁԲ-22/18

«11» 03 2022թ.

ք. Երևան

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը (այսուհետ՝ Կողմ 1), ի դեմս ռեկտոր Վարդան Ուռուտյանի, որը գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա, մի կողմից և «Անտարես» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կողմ 2), ի դեմս գործադիր մարմնի ղեկավար Արմեն Մարտիրոսյանի, որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

Պայմանագրով Կողմ 2-ը պարտավորվում է իրականացնել **տպագրական աշխատանքներ** (այսուհետ՝ Ծառայություններ), իսկ Կողմ 1-ը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով ու ժամկետներում ընդունել այդ ծառայությունները:

2.Գումարի չափն ու վճարման պայմանները

2.1. Պայմանագրի շրջանակներում Կողմ 2-ը պարտավորվում է իրականացնել տպագրական աշխատանքներ՝ ըստ Հավելված 1-ում նշված տեխնիկական պարամետրերին համապատասխան: Ծառայությունների մատուցման սկիզբը պայմանագրի երկկողմանի ստորագրման օրն է: Ծառայությունները նախատեսվում է իրականացնել 15 աշխատանքային օրերի ընթացքում:

2.2 Պայմանագրի գինը ձևավորվում է պայմանագրի շրջանակներում Կողմ 2-ի կողմից մատուցվելիք Ծառայությունների արժեքների հանրագումարից՝ աշխատանքի ընթացքում ստացված և Հավելված 1-ով սահմանված տեխնիկական պարամետրերին համապատասխան:

2.3. Պատվերի գումարը կազմում է **236 820** (երկու հարյուր երեսունվեց հազար ութ հարյուր քսան) ՀՀ դրամ:

2.4. Պատվերի գումարը Կողմ 1-ի կողմից ուշացնելու դեպքում կիրականացվի տույժ չվճարված գումարի գումարի 0.5 %-ի չափով յուրաքանչյուր ուշացված օրվա համար: Վճարումը պետք է իրականացվի աշխատանքի ավարտից, ընդունման-հանձնման ակտի ստորագրումից հետո՝ առնվազն 1 շաբաթվա ընթացքում: Նմանատիպ տուգանքներ են գործելու նաև Կողմ 2-ից նկատմամբ՝ նրա կողմից ծառայությունների ժամկատների խախտման դեպքում:

2.5 Պայմանագրի գումարը ենթակա է փոփոխման, եթե Հավելված 1-ում որևէ տեխնիկական պարամետր ենթարկվում է փոփոխության (այսուհետ՝ Հավելված 1):

3.Ընդհանուր դրույթներ

3.1. Ծառայությունները պետք է մատուցվեն տեխնիկական պայմաններին համապատասխան, որոնք սահմանված են Պայմանագրի բաղկացուցիչ մասը հանդիսացող №1 Հավելվածով:

3.2. Ծառայությունների մատուցման արդյունքում թողարկված տպագրական աշխատանքների բոլոր օրինակները պետք է համապատասխանեն Կողմ 1-ի կողմից հաստատված օրինակելի

նմուշին, որը Կողմ 2-ի կողմից պետք է պատրաստվի լազերային տպագրման եղանակով՝ նախքան տպագրական աշխատանքների թողարկումը և ներկայացվի Կողմ 1-ի հաստատմանը:

3.3. Կողմ 1-ը պարտավոր է հաստատել օրինակելի նմուշը տպագրական ֆայլը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

3.4. Տպագրական աշխատանքների բոլոր օրինակները պետք է թողարկվեն նմուշի հաստատումից 15 աշխատանքային օրերի ընթացքում, (ժամկետները կարող են փոփոխվել նմուշի հաստատման ուշացման կամ տպագրական աշխատանքների տեսակի կամ քանակի փոփոխման դեպքում):

3.5. Պայմանագրով սահմանված Ծառայությունները համարվում են Կողմ 2-ի կողմից մատուցված և Կողմ 1-ի կողմից ընդունված՝ Պայմանագրի շրջանակներում թողարկված տպագրական աշխատանքների խմբաքանակը Կողմ 1-ի կողմից փաստացի ընդունման-հանձման ակտով ընդունելու պահից:

3.6 Տպագրական ֆայլերը հանդիսանում են Կողմ 1-ի սեփականությունը և դրա հեղինակային իրավունքները պատկանում է Կողմ 1-ին:

3.7. Պայմանագրից առաջացող համապատասխան հարկերի վճարումը կատարում է Կողմ 2-ը:

3.8. 3-րդ կողմի հետ առաջացած խնդիրների դեպքում (օրինակ՝ Հեղինակային իրավունքի խախտում և այլն) պատասխանատու է Կողմ 1-ը:

3.9. Կողմ 1-ի կողմից տրամադրված նյութերը կողմ 2-ը իրավունք չունի կիրառել այլ աշխատանքների մեջ կամ տրամադրել 3-րդ կողմին:

4.Կողմերի իրավունքները և պարտականությունները

Կողմ 1-ը պարտավոր է՝

4.1.Պատշաճ որակով Կողմ 2-ին տրամադրել տպագրվող նյութերի ամբողջ ինֆորմացիան (տեքստ, ֆոտո, իլյուստրացիա և այլն):

4.2. Չխոչընդոտել Կողմ 2-ի կողմից Ծառայությունների մատուցման ընթացքը:

Կողմ 2-ը պարտավոր է՝

4.3. Ծառայությունները մատուցել պատշաճ որակով և Պայմանագրով սահմանված տեխնիկական պայմաններին համապատասխան.

4.4. Կատարել Կողմ 1-ի պարտադիր ցուցումները՝ կապված Ծառայությունների մատուցման կարգի, ընթացքի և որակի հետ:

4.5. Կողմ 1-ը իրավունք ունի՝ վերահսկել Կողմ 2-ի կողմից Պայմանագրով սահմանված Ծառայությունների մատուցման ընթացքը:

4.6. Պահանջել Կողմ 1-ից անհարկի չխոչընդոտել իր կողմից Պայմանագրով սահմանված Ծառայությունների մատուցմանը:

5.Կողմերի պատասխանատվությունը

5.1. Կողմերն օրենսդրությամբ և Պայմանագրով սահմանված կարգով լրիվ նյութական պատասխանատվություն են կրում Պայմանագրի շրջանակներում ստանձնած իրենց պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

5.2. Կողմերն ազատվում են Պայմանագրով ստանձնած իրենց պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար սահմանված պատասխանատվությունից, եթե դա հետևանք է անհաղթահարելի ուժի ազդեցության, որը ծագել է Պայմանագրի կնքումից

հետո, էական վնաս է հասցնում Կողմերի կամ նրանցից որևէ մեկի բնականոն գործունեությանը, և, որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխել:
5.3. Որպես անհաղթահարելի ուժի ազդեցության հանգամանքներ կարող են ծառայել մասնավորապես (սակայն չսահմանափակելով)՝ ջրհեղեղը, հրդեհը, երկրաշարժը կամ այլ տարերային երևույթները, ինչպես նաև պատերազմները, ռազմական գործողությունները և ցանկացած այլ հանգամանքներ, որոնք դուրս են Կողմերի ողջամիտ հսկողությունից:
5.4. Պայմանագրի 5.2. կետով սահմանված հանգամանքներն առաջանալու դեպքում Կողմերը պարտավոր են այդ մասին անհապաղ ծանուցել միմյանց՝ նշելով այդ հանգամանքների ազդեցության հնարավոր ժամկետները:

6.Եզրափակիչ դրույթներ

6.1. Պայմանագիրը կնքված է համարվում և իրավական ուժ է ստանում Կողմերի (նրանց ներկայացուցիչների) կողմից ստորագրվելու պահից և դադարում է Կողմերի ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարմամբ:
6.2. Պայմանագիրը կազմված է երկու իրավահավասար օրինակներից, որոնցից մեկական օրինակ պահվում է Կողմերից յուրաքանչյուրի մոտ:
6.3. Պայմանագրի բոլոր փոփոխություններն ու լրացումները վավեր են, եթե կազմված են մեկ միասնական փաստաթղթի տեսքով, ստորագրված են Կողմերի (նրանց ներկայացուցիչների) կողմից և հաստատված են Կողմերի ստորագրություններով կամ կնիքներով եթե այդպիսին առկա է:
6.4. Կողմերի միջև հաղորդագրությունը կարող է իրականացվել էլեկտրոնային կարգով, կողմերի պաշտոնական էլեկտրոնային փոստի միջոցով: Կողմ 1-ի կոնտակտային փոստի հասցեն է՝ garegin77@gmail.com (cc: inter@anau.am), իսկ Կողմ 2-ինը՝ lala@antares.am:
6.5.Կողմերի միջև էլեկտրոնային նամակագրությունը և դրանով հաստատված պատվերների ձևակերպումը հանդիսանում են սույն պայմանագրի բաղկացուցիչ մաս:
6.6. Կողմերի միջև Պայմանագրի շուրջ ծագած վեճերը և (կամ) տարաձայնությունները լուծվում են Կողմերի անմիջական բանակցությունների միջոցով, իսկ ողջամիտ ժամկետում համաձայնության չգալու դեպքում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:
6.7. Բոլոր այն հարցերը, որոնք չեն կարգավորվել Պայմանագրով, ենթակա են կարգավորման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հավելված 1

N.	Անվանում	Քանակ/հատ	Գինը/հատ/դրամ	Գինը/ընդհանուր/դրամ
1.	Roll-up՝ 85*200սմ, տպագրությամբ	1	25 920	25 920
2.	Բուկլետի տպագրություն	100	402	40 200
3.	Գրիչ Senator՝ 2362, գունավոր, 1 տեղ տպագրությամբ,	100	615	61 500

4.	Բլոկնոտի տպագրություն՝ Ա5, 1+1, 80գր թուղթ Կազմը՝ 4+0, լամինացված, զսպանակը՝ կողքից	100	1092	109 200
Ընդամենը				**236 820**

7.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Կողմ 1 Հայաստանի ազգային ագրարային համալսարան Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Տերյան 74 ՀՎՀՀ 01507028 h/h 247010053103 ԱՇԻԲ ՓԲԸ Ռեկտոր՝ Վարդան Ուռուտյան Ստորագրություն	Կողմ 2 «Անտարես» ՍՊԸ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Մաշտոցի 50ա/1 ՀՎՀՀ 02519531 h/h 1930032650660104 «Կոնվերս բանկ» ՓԲԸ Արմեն Մարտիրոսյան Ստորագրություն